բանած քէսմէն տուր ընծայ թագաւորին, իսկ միւս ակնեղինացդ այլ գին ոչ դնեմ, զի մեր թագաւորն ընդ տեսանելն առնու զայսոսիկ և տայ ի գին սոցա բեռ մի ոսկի ուղտու, և Թովմաճանն ասէ. Մի ուղտու բեռն ոսկի աւելի է. ես հաճիմ ընդ մի բեռն իշոյ։

Վերջապէս ընդ խաբս եղեալ Թովմաճանին բացորոշեաց գնալ ընդ այնմ Բիջոյի ի յԵթովպիա ի թագաւորանիստ քաղաքս Կեօնտէր։

Եւ յետ այնորիկ սկսաւ մեծարել զԱյդու Բիջոն և ասել թէ՝ եթէ ունիս պիտոյս ինչ դրամոց և կամ այլ իրաց, ասա՛ համարձակ։ Եւ նա խնդրեաց զհարիւր դահեկանս. և իսկոյն ետ նմա Թովմաճանն. այլ եւս դաշնադրեցան յայն ինչ աւուր չուել ի միասին, և սկսան տեսանել զպատրաստութիւն ճանապարհի, այլ եւս գնել զընծայս ինչ 50 դուրուշի թէլլի սախըզու շալ և քանի նրբագործ սէթճատէս. և կալան ի վարձու գնաւակ գնալ ի Մբսովայ (= Մասաւուա Երիթրէի)։

1764 – Արդ ի ձիտտէ նստաւ Թովմաճանն զաւուրս 64, և ապա 1764 և յունվ. 11ին ել ի ձիտտէէն Թովմաճանն ընդ Այդու Բիջոյին և համայն ընկերօքն նաւակաւ, և ի գնալն առ ափամբ երջանիկն Արաբիոյ՝ այսինքն Եէմէնու, հանդիպեցաւ նաւակն ի Լոհիա և ի ձէզան. այսոքիկ երկիրք Սանայու իմամի ներքոյ են. և իշխանն ձէզանու արգելեալ է զի մի՛ ոք ի քրիստոնէից մտցէ յերկիրն իւր սուրբ համարելով, զի Մէքքէի մօտ է. և խեղճ Թովմաճանն այլ և նաւապետն ոչ գիտելով զայն հրաման՝ ելին արտաքս, և նաւակն ընդ որ եկին՝ դարձաւ ի նաւն. և անդ ի ծովեզրն շրջելն, եկն մին բարի տաճիկ ոմն և մերձեցեալ առ Թովմաճանն ցած ձայնիւ ասէ. Դարձի՛ր դարձի՛ր փութով ի նաւն քոյ, զի այժմ տեսեալ զքեզ արք իշխանին՝ ըմբռնեն և տան լոպուտս, և զհարիւր դահեկան կամ ըռեալ առնուն տուգանս։ Եւ խեղճ Թովմաճանն թէպէտ իսկոյն կամեցաւ դառնալ, բայց նաւակ ոչ գոյր. և նաւապետն եւս երկուցեալ թէ մի՛ գուցէ եկեալ ի նաւէն եւս հանցեն զԹովմաճանն և տուժեսցին, վասն որոյ և նա ընդ Թովմաճանին կամեցաւ դառնալ ի նաւ, և գտեալ զփոքրիկ նաւակ մի ֆելլահի բեկոտեալ և գարշելի իւղով օծեալ, որ և ոչ ունէր զթի վարելոյ՝ մտին անդր և բեկորօք տախտակաց մինչեւ ի հասանիլ ի նաւն կիսամեռ եղեւ Թովմաճանն ի յերկիւղէն, և հանդերձն ապականեալ յոյժ և չորս դուրուշ եւս ետ վարձս ֆելլահիցն վասն բերելոյ. և նաւապետն իսկոյն բացեալ զառագաստ նաւին փախեան. և ապա արքն իշխանին իմացեալ 5–6 զոյգ թիովք պնդեցան զհետ նաւին, բայց ոչ կարացին ժամանել։ Տեսցուք աստէն ի սկզբանն այս ճանապարհիս զորքան երկիւղս և անաջողմունք դիպեցաւ և դեռ զորքանս կրելոց է, և զդրամս ծախելոց է, և զորքան ժամանակս անաջողութեամբ կորուսանելոց է և վերջապէս անպտուղ լինելոց է խեղճ Թովմաճանն հաւատալով խաբէութեանն և ստութեան Այդու Բիջոյին և ունկնդրելով որդւոյ իւրոյ Պօղոսի։

Վերջապէս անցին զկարմիր ծովն և հասին ի Մասվայի կղզին Յունվարի 29ին ուր նստին ի մաքսն յարանցն ձիտտէի փաշային. և Թովմաճանն ծածկեաց զամենայն ակնեղէնսն իւր ի մաքսէն, և միայն զձիոյ բանած քեսմէն եհան արտաքս. և զմաքսն վասն քեսմէի և այլ հանդերձի ետ ղրշ. 88։ Ի ճերմակ միսաֆիր մարդկանց մաքս առնուն, ուստի ի Թովմաճանէն և յորդւոյ Պօղոսին ետուն մաքս ղրշ. 100. ապա անցին ի Մասվա կղզւոյն ի Հարքիքո՝ որ է ի յԱֆրիկա, և անդ առապի Նայիպ Օսման աղա և Ապու Ալին հրամայէ, սոցա եւս ետ զընծայս Պուռսայի ղութնի և զայլ պոհճալքք, եղեւ ղրշ. 150։ Այլ և սոցա մարդկանցն և Ահմէտ Ատուլային թէ՝ ընծայ և ստակ ետ ղրշ. 82։ Այլ եւս գնեաց զերկուս ջորիս և զերկուս էշս վասն ճանապարհի՝ ղրշ. 130, և վարձն եկեալ նաւին եւս ետ ղրշ. 50։

Արդ ի Մասվա և Հարքիքոյ կացեալ